ԿԱՊԱԼԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ
ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N<<ԵՔ-ԲՄԱՇՁԲ-19/31-3>>

ք.Երևան «10» հունիսի 2019 թ.

Երևանի քաղաքապետարանը, ի դեմս աշխատակազմի գնումների վարչության պետ Է. Կիրակոսյանի, որը գործում է Երևանի քաղաքապետի 14.11.2018 թվականի թիվ 3407-Ա որոշման հիման վրա (այսուհետև՝ Պատվիրատու), մի կողմից, և <<Ռադիկ Շին>ՍՊԸ-ն, ի դեմս Ընկերության տնօրեն Ա. Դավթյանի, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Կապալառու), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Կապալառուն պարտավորվում է սույն պայմանագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում կատարել սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) N 1 Հավելվածով սահմանված ծավալաթերթ-նախահաշվով նախատեսված **Երևան քաղաքի Աջափնյակ վարչական շրջանի Ֆուչիկի 1-ին նրբ. 5 շենքի բակային տարածքի հիմնանորոգման աշխատանքները** (այսուհետ՝ աշխատանք), իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել կատարված աշխատանքը և վարձատրել դրա համար:

1.2 Պայմանագրով նախատեսված աշխատանքները կատարվում են ՀՀ օրենսդրությամբ սահմանված ստանդարտներին, շինարարական նորմերին և կանոններին, աշխատանքի նախագծին, ինչպես նաև պայմանագրի անբաժանելի մասը կազմող աշխատանքի ծավալաթերթ-նախահաշվին համապատասխան:

1.3 Պայմանագրով նախատեսված աշխատանքները սկսվում են պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո **և կատարման ժամկետը է սահմանվում է՝ 2019թ սեպտեմբերի 30-ը:**

Պայմանագրով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների կատարման ժամկետները որոշվում են կողմերի կողմից համաձայնեցված օրացուցային գրաֆիկով (Հավելված N 2):

2. ԿԱՊԱԼԱՌՈՒԻ ՄԻՋՈՑՆԵՐՈՎ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ԿԱՏԱՐԵԼԸ

2.1 Աշխատանքը կատարվում է Կապալառուի ուժերով, նյութերով և միջոցներով:

2.2 Կապալառուն պատասխանատվություն է կրում իր տրամադրած նյութերի և սարքավորումների որակի համար:

3. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

3.1. Պատվիրատուն իրավունք ունի՝

3.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կապալառուի իրականացրած աշխատանքի ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը.

3.1.2 Կապալառուի կողմից պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետի (ներառյալ օրացուցային գրաֆիկի) խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել աշխատանքի կատարման նոր ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.1.3 Չընդունել աշխատանքի արդյունքը՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված դրույթներին, պայմանագրի 1.2 կետով նախատեսված փաստաթղթերի պահանջներին չհամապատասխանելու դեպքում՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը, ինչպես նաև 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.1.4 Միակողմանի լուծել պայմանագիրը և պահանջել հատուցելու իրեն պատճառված վնասները, եթե.

ա) Կապալառուն ժամանակին չի սկսում աշխատանքի կատարումը կամ աշխատանքը կատարում է այնքան դանդաղ, որ դրա ժամանակին ավարտը դառնում է ակնհայտ անհնար,

բ) Կապալառուն խախտել է պայմանագրի 1.3 կետում նախատեսված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը),

գ) Կապալառուի կողմից կատարված աշխատանքը չի համապատասխանում նախագծանախահաշվային փաստաթղթերով սահմանված պահանջներին,

դ) Կապալառուի կողմից խախտվել են պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով աշխատանքի թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետները.

3.1.5 Աշխատանքի արդյունքի թերությունների հետ կապված պահանջներ ներկայացնել երաշխիքային ժամկետում:

3.1.6 Լիազորել այլ անձի՝ աշխատանքի իրականացման նկատմամբ տեխնիկական հսկողություն իրականացնելու նպատակով.

3.1.7 Մինչև Պատվիրատուի կողմից Կապալառուի կատարած աշխատանքի արդյունքն ընդունելը, պահանջել իրեն հանձնելու անավարտ աշխատանքի արդյունքը՝ պայմանագիրն օրենքով կամ պայմանագրով նախատեսված հիմքերով դադարեցնելու դեպքում:

3.2. Պատվիրատուն պարտավոր է՝

3.2.1 Աշխատանքը կատարելիս՝ աջակցել Կապալառուին պայմանագրով նախատեսված դեպքերում, ծավալով և կարգով.

3.2.2 Պայմանագրով նախատեսված ժամկետում և կարգով Կապալառուի մասնակցությամբ զննել և ընդունել կատարված աշխատանքը (դրա արդյունքը), իսկ պայմանագրից աշխատանքի արդյունքը վատթարացնող շեղումներ կամ աշխատանքում այլ թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ հայտնել Կապալառուին.

3.2.3 Պայմանագրի ուժի մեջ մտնելու պահից 5 աշխատանքային օրվա ընթացքում Կապալառուին տրամադրել աշխատանքի իրականացման համար համապատասխան տարածք.

3.2.4 Պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում աշխատանքի արդյունքն ընդունելու դեպքում Կապալառուին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները:

3.3. Կապալառուն իրավունք ունի՝

3.3.1 Պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում աշխատանքի արդյունքը հանձնելու դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու պայմանագրի 5.1 կետով նախատեսված՝ վճարման ենթակա գումարը:

3.3.2 Պատվիրատուի կողմից պայմանագրի 5.3 կետում նշված ժամկետների խախտման դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները և պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

3.4. Կապալառուն պարտավոր է՝

3.4.1 Աշխատանքները կատարել անձամբ, պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում, իր ուժերով, գործիքներով, մեխանիզմներով, ինչպես նաև անհրաժեշտ նյութերով ու պատշաճ որակով՝ նախագծին և ծավալաթերթին համապատասխան:

3.4.2 Կատարել աշխատանքի վերաբերյալ Պատվիրատուի տված ցուցումները, եթե դրանք չեն հակասում պայմանագրի պայմաններին:

3.4.3 Ապահովել շինմոնտաժային աշխատանքների կատարումը շինարարական նորմերին, կանոններին ու տեխնիկական պայմաններին համապատասխան, կատարել իր կողմից մոնտաժված սարքավորման (էլեկտրական, ջեռուցման, ջրամատակարարման, կոյուղու, օդափոխիչ և այլն) անհատական փորձարկում, մասնակցել սարքավորման համալիր փորձարկմանը:

3.4.4 Աշխատանքի արդյունքը Պատվիրատուին հանձնելիս նրան հայտնել այն պահանջների և կանոնների մասին, որոնց պահպանումն անհրաժեշտ է աշխատանքի արդյունքի արդյունավետ և անվտանգ օգտագործման համար, ինչպես նաև տեղեկություններ հաղորդել այդ պահանջները և կանոնները չպահպանելու հնարավոր հետևանքների մասին:

3.4.5 Պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը) խախտելու և Պատվիրատուի կողմից աշխատանքի կատարման նոր ժամկետ սահմանվելու դեպքում, ապահովել աշխատանքի կատարումը սահմանված ժամկետում և յուրաքանչյուր ուշացված օրվա համար վճարել պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.4.6 Պայմանագրի 3.1.4 կետով նախատեսված հիմքերով պայմանագրի լուծման դեպքում հատուցել Պատվիրատուին պատճառված վնասները և վճարել 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.4.7 Շինարարության օբյեկտի կոնսերվացման անհրաժեշտության ծագման դեպքում՝ իր միջոցներով կատարել աշխատանքը դադարեցնելու և շինարարությունը կոնսերվացնելու անհրաժեշտությունից բխող ողջամիտ ծախսերը:

3.4.8 Եթե շինարարական ծրագրերի կատարման արդյունքի կամ դրա առանձին բաղադրիչի համար սահմանված երաշխիքային ժամկետի ընթացքում հայտ են եկել կատարված աշխատանքի թերություններ, ապա Կապալառուն պարտավոր է իր հաշվին, Պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

3.4.9 Պայմանագրով երաշխիքային ժամկետ է սահմանվում Պատվիրատուի կողմից ողջ ծավալով Աշխատանքն ընդունվելու օրվան հաջորդող օրվանից հաշված **365 օրացուցային օր**: Եթե երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել կատարված Աշխատանքի թերություններ, ապա Կապալառուն պարտավոր է իր հաշվին, Պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

3.4.11 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

4. ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

4.1 Կատարված աշխատանքը ընդունվում է Պատվիրատուի և Կապալառուի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կապալառուի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով աշխատանքի կատարման համար նախատեսված օրը ներառյալ Կապալառուն Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 4.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 4): Ընդ որում Կապալառուն հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

4.2 Եթե կատարված աշխատանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 4.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 20 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կապալառուին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

4.3 Եթե կատարված աշխատանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կապալառուին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կապալառուի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

4.4 Եթե պայմանագրի 4.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում կատարված աշխատանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա կատարված աշխատանքը համարվում է ընդունված և պայմանագրի 4.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կապալառուին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4.5 Աշխատանքի կամ պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների արդյունքները նախագծանախահաշվային փաստաթղթերին չհամապատասխանելու դեպքում կողմերը կազմում են երկկողմ ակտ՝ թվարկելով թերությունների վերացման համար պահանջվող՝ կատարման ենթակա լրացուցիչ աշխատանքները և ժամկետները:Կապալառուն պարտավոր է պայմանագրային գնի սահմաններում, առանց լրացուցիչ վճարի, կատարել անհրաժեշտ աշխատանքներ:

4.6 Աշխատանքն ընդունելիս կիրառվում են նաև հետևյալ պայմանները՝

1) Կապալառուի կողմից շինարարության ավարտի մասին տեղեկություն ստանալուց հետո Պատվիրատուի ղեկավարը ձեռնարկում է միջոցներ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ սահմանված հանձնաժողով ձևավորելու և կատարված աշխատանքներն ընդունելու համար.

2) պայմանագրի կատարման արդյունքը համարվում է ամբողջությամբ ընդունված պետական կառավարման մարմնի ղեկավարի՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ սահմանված կարգով ձևավորված հանձնաժողովի (այսուհետ՝ ընդունող հանձնաժողով) կողմից կատարված աշխատանքներն ընդունվելու դեպքում.

3) մինչև ավարտված շինարարական օբյեկտի ընդունումը՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 9-ի N 596-Ն որոշման համապատասխան ստեղծված հանձնաժողովը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով փաստագրում է ավարտված շինարարության օբյեկտը և կազմում օբյեկտը շահագործման ընդունող հանձնաժողովի ակտ.

4) սույն կետի 3-րդ ենթակետում նշված ակտը սահմանված կարգով ստանալուց հետո պատասխանատու ստորաբաժանումն ստուգում է ավարտված շինարարական օբյեկտի (կատարված աշխատանքների) համապատասխանությունը պայմանագրի պահանջներին և, եթե կատարված աշխատանքը՝

ա. համապատասխանում է պայմանագրի պայմաններին, ապա ստորագրվում է պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրություն,

բ. չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա արձանագրություն չի ստորագրվում.

5) մինչև սույն կետով նախատեսված պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրությունն ստորագրելը՝ Պատվիրատուն չի վճարում կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսը, իսկ տարաժամկետ

վճարելու դեպքում՝ վերջին վճարման գումարը, որը չի կարող պակաս լինել կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսից:

5. ԱՇԽԱՏԱՆՔԻ ԳԻՆԸ ԵՎ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Սույն պայմանագրի ընդհանուր գինը կազմում է **11200000 (տասնմեկ միլիոն երկու հարյուր հազար)** ՀՀ դրամ:Գինը ներառում է Կապալառուի կողմից իրականացվող բոլոր ծախսերը,

5.2 Աշխատանքի գինը կայուն է և Կապալառուն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

5.3 Պատվիրատուն վճարում է աշխատանքի կամ պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված՝ առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների՝ պայմանագրի 4-րդ բաժնով նախատեսված կարգով ընդունելու դեպքում Հայաստանի Հանրապետության դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կապալառուի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 3) նախատեսված չափերով և ամիներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 20-ը :

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Կապալառուն պատասխանատվություն է կրում Աշխատանքի որակի և սույն պայմանագրի 1.3 կետով (ներառյալ օրացուցային գրաֆիկը) նախատեսված ժամկետի պահպանման համար:

6.2 Սույն պայմանագրով նախատեսված Աշխատանքի կատարման ժամկետը խախտելու դեպքում Կապալառուից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ կատարման ենթակա, սակայն չկատարված Աշխատանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուր երրորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով Պատվիրատուի կողմից աշխատանքը չընդունվելու, ինչպես նաև 3.1.4 կետով նախատեսված կարգով պայմանագիրը լուծելու դեպքում Կապալառուից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 5.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Կապալառուին վճարվող գումարների հետ:

6.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 5.3 կետով նախատեսված ժամկետների խախտման համար Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուր երրորդական) տոկոսի չափով:

6.6 Պայամանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքների վճարումը կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները կատարելուց:

7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել:Այդպիսի իրավիճակներեն երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը:Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կապալառուն ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կապալառուի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող աշխատանքի ծավալների կամ ձեռք բերվող աշխատանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.8 Աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կապալառուի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել աշխատանքի օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.9 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կապալառու կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:
Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կապալառուի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կապալառուն:

8.10 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքովկամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.11 Կապալառուի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կապալառուն, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

8.12 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով:Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.13 Սույն պայմանագիրը կազմված է ____ էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:Սույն պայմանագրի N 1, N 2, N 3 N 4 և N 4.1 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.14 Սույն պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8.15 Սույն պայմանագրով նախատեսնված Պատվիրատուի իրավունքներն ու պարտականությունները իրականացնում Երևան քաղաքի Աջափնյակ վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմը:

9. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Պատվիրատու	**Կապալառու**
Երևանիքաղաքապետարան	<<Ռադիկի Շին>> ՍՊԸ
ք.Երևան 0015, Արգիշտիիփ. 1	ՀՀ ք. Երևան, Հաղթանակ 14, 2 տուն
Կենտրոնական գանձապետարան	<<Ակբա Կրեդիտ Ագրիկոլ բանկ>> ՓԲԸ
Հ/Հ900052473429	Հ/Հ 2205133330146000
ՀՎՀՀ 02593108	ՀՎՀՀ 01269471
Է. Կիրակոսյան ----------	Ա. Դավթյան ----------
(ստորագրություն)	(ստորագրություն)
Կ.Տ	Կ.Տ

Հավելված թիվ 1
<<10> հունիսի 2019թ.
Կնքված աշխատանքների կատարման
*թիվ<<**ԵՔ-ԲՄԱՇՁԲ-19/31-3**>>գնման պայմանագրի*

ԾԱՎԱԼԱԹԵՐԹ -ՆԱԽԱՀԱՇԻՎ*

Երևան քաղաքի Աջափնյակ վարչական շրջանի Ֆուչիկի 1-ին նրբ. 5 շենքի բակային տարածքի հիմնանորոգման աշխատանքներ

NN	Հիմնավորումը	Աշխատանքների անվանումը	Չափման միավորը	Ծավալը	Միավորի ընդհանուր արժեքը	Ընդհանուր արժեքը
					հազ. դրամ	հազ. դրամ
1	2	3	4	5		
		Շինարարական աշխատանքներ				
		Քանդման աշխատանքներ				
1	Р23-247 Р23-223 Р23-234	Տարածքի մաքրում, աղբի հավաքում, տեղափոխում եւ բարձում ինքնաթափ մեքենաների վրա	տն	2.70000	0.77060	2.08062
2	С310-13	Աղբի տեղափոխում մինչև 13կմ	տն	2.70000	1.93100	5.21370
3	Е46-99	Բետոնե հարթակների, աստիճանների քանդում	$մ^3$	13.36000	11.31560	151.17642
4	Е27-36	Բետոնե եզրաքարերի ապամոնտաժում /բետոնե հիմքով/	գմ	45.40000	0.57470	26.09138
5	Е46-76 կիր.	Քարե հենապատերի քանդում	$մ^3$	22.80000	8.04130	183.34164
6	СНиП IV-3-82 հաշվարկ	Վերամբարձիչի շահագործում	մեք. ժամ	3.50000	5.36390	18.77365
7	Р9-26 կիր.	Մետաղական ցանկապատերի, ճաղաշարերի ապամոնտաժում	գմ	104.80000	0.30950	32.43560

8	C310-2 տ.մ.կ 29	Նստարանների ապամոնտաժում	հատ	2.00000	1.03270	2.06540
9	E48-253 կիր.	Տարածքի մաքրում կոճղաշիվերից և անկանոն աճած թփերից	հատ	150.00000	0.03920	5.88000
10	E1-1587	III կարգի գրունտի մշակում մեխանիզմով ա/ինքնաթափերի վրա բարձելով	մ^3	17.20000	0.35010	6.02172
11	E1-1545	III կարգի բնահողի մշակում էքսկավատորով, կողլիցք	մ^3	36.80000	0.26190	9.63792
12	E1-1730 E1-1740	Գրունտի ետլիցք բուլդոզերով տեղափոխելով մինչև 10մ	մ^3	36.80000	0.09590	3.52912
13	E1-961	III կարգի գրունտի մշակում ձեռքով	մ^3	28.40000	1.43660	40.79944
14	C310-13 տ.մ.կ 29	Շին. աղբի և ավելորդ բնահողի բարձում ինքնաթափ մեքենաների վրա եւ տեղափոխում մինչև 13կմ	տ	113.71000	2.44030	277.48651
		Կառուցողական աշխատանքներ				
		Բազալտե եզրաքարերի տեղադրում 300x150 մմ չափերով				
1	E27-22-1	Խճի նախապատրաստական շերտի իրականացում 7սմ հաստությամբ	մ^3	1.42900	6.30390	9.00827
2	E27-82-1	Բազալտե եզրաքարերի տեղադրում 300x150մմ չափերի	գմ	81.70000	6.77300	553.35410
		Բետոնե եզրաքարերի տեղադրում 200x80 մմ չափերով				
1	E27-22-1	Խճի նախապատրաստական շերտի իրականացում 5սմ հաստությամբ	մ^3	1.11300	6.30390	7.01624
2	E27-79	Բետոնե եզրաքարերի տեղադրում 200x80մմ չափերի	գմ	148.40000	2.86280	424.83952
		Բետոնե սալիկների (տոմետ) տեղադրում				
1	E27-22-1	Խճի նախապատրաստական շերտի իրականացում 5սմ հաստությամբ	մ^3	3.93500	6.29450	24.76886
2	E27-19	Հարթեցնող շերտ բետոնե սալերի տակ 4սմ հաստութ.չոր g/ա շաղախով	մ^3	3.14800	12.13020	38.18587
3	E27-176	Սալիկապատում բետոնե սալիկներով 6սմ հաստությամբ	մ^2	78.70000	3.84320	302.45984
		Բետոնե հենապատի կառուցում L=10.6 գմ				

1	E27-22-1	Խճի նախապատրաստական շերտի իրականացում 7սմ հաստությամբ	մ^3	0.45000	6.30390	2.83676
2	E6-93	Հենապատի ե/բ հիմքի կառուցում B15 դասի բետոնից	մ^3	2.12000	42.04570	89.13688
3	շուկա	Ամրան Φ12A500c	տ	0.03800	251.12390	9.54271
4	շուկա	Ամրան Φ8AcI	տ	0.03300	308.67350	10.18623
5	E6-90	Բետոնե հենապատի կառուցում B15 դասի բետոնով	մ^3	5.09000	35.03090	178.30728
6	E15-201	Հենապատի սվաղում ցեմենտավազային շաղախով 1:3 հարաբերությամբ	մ^2	17.20000	1.17640	20.23408
7	E15-521 K=2	Հենապատի դիմային հատվածի նկարազարդում	մ^2	17.20000	0.85080	14.63376
		Բետոնե հենապատի կառուցում L=25.0 գմ /5.4+19.6/				
1	E27-22-1	Խճի նախ. շերտի իրականացում h=10սմ	մ^3	2.50000	6.29450	15.73625
2	E6-1	Նախապատրաստական շերտի իրականացում B7.5 դասի բետոնից	մ^3	2.25000	25.15180	56.59155
3	E6-90	Բետոնե հենապատի կառուցում B15 դասի բետոնից /հիմք եւ իրան/	մ^3	24.94000	35.03090	873.67065
4	E23-12Kն=1.2	Դրենաժային ելքերի իրականացում պողպատե ծակոտկեն խողովակներից ∅80մմ	գմ	5.50000	2.04500	11.24750
5	E30-354	Հենապատի ետնամասի դրենաժի իրականացում Φ96մմ	գմ	25.00000	4.80460	120.11500
6	շուկա	Ավազ, h=100մմ	մ^3	3.10000	1.50940	4.67914
7	շուկա	Խիճ /20-40մմ/, h=100մմ	մ^3	2.79000	3.58750	10.00913
8	շուկա	Կավ	մ^3	7.72000	0.71750	5.53910
9	E8-27	Ետնամասի ջրամեկուսացում բիտումի տաք կրկնակի քսուկով	մ^2	67.40000	0.72090	48.58866
10	E15-201	Հենապատի սվաղում ց/ավազե շաղախով 1:3 հարաբերությամբ	մ^2	40.24000	1.01080	40.67459
11	E15-521 K=2	Հենապատի դիմային հատվածի նկարազարդում	մ^2	40.24000	0.85080	34.23619

		Աստիճանների կառուցում, երեսպատում բազալտե սալերով				
1	E8-11	Տոփանած գրունտի բազալտե խճի խարնուրդով շերտ (50%/50%)	մ^3	1.03000	3.98250	4.10198
2	E6-90	Բետոնե աստիճանների և հարթակի կառուցում B15 դասի բետոնով	մ^3	2.23000	35.03090	78.11891
3	շուկա	Ամրան A500C	տ	0.05300	251.12390	13.30957
4	շուկա	Ամրան AcI	տ	0.02800	308.67350	8.64286
5	E15-77	Աստիճանների երեսպատում բազալտե սալերով 30մմ հաստ.	մ^2	8.65000	11.52340	99.67741
6	E27-22-1	Խճի նախապատրաստական շերտի իրականացում 7սմ հաստությամբ	մ^3	0.70000	6.30390	4.41273
7	E6-93	Հենապատի ե/բ հիմքի կառուցում B15 դասի բետոնից	մ^3	4.80000	42.04570	201.81936
8	շուկա	Ամրան Φ12A500c	տ	0.05683	251.12390	14.27137
9	շուկա	Ամրան Φ8AcI	տ	0.03160	308.67350	9.75408
10	E6-90	Բետոնե հենապատի կառուցում B15 դասի բետոնով	մ^3	6.20000	35.03090	217.19158
11	E15-201	Հենապատի սվաղում ցեմենտավազային շաղախով 1:3 հարաբերությամբ	մ^2	32.80000	1.17640	38.58592
12	E15-521 K=2	Հենապատի դիմային հատվածի նկարազարդում	մ^2	16.40000	0.85080	13.95312
13	E46-156 E46-172	Անցքերի շաղափում բազրիքների ներդիր տարերի տեղադրման համար, Φ14, L=150մմ	հատ	11.00000	0.54720	6.01920
14	E6-83	Ներդիր տարրերի տեղադրում	տ	0.00260	411.16660	1.06903
15	գ/հաշվարկ "Վերականգնում"	Պոլիմերցեմենտային լուծույթի ներարկում շաղափած անցքերում	կգ	0.19000	2.29340	0.43575
16	E9-209	Մետաղական բազրիքների հավաքակցում	տ	0.08300	105.23640	8.73462
17	շուկա	Մետաղական ուղղանկյուն խողովակ 50x30x3մմ	գմ	24.10000	1.35160	32.57356
18	E15-614	Մետաղական բազրիքի երկշերտ յուղաներկում	մ^2	3.86000	0.76450	2.95097

		Բետոնե հենապատի բարձրացում, անհարթությունների ուղղում				
1	E46-51	Անցքերի բացում գոյություն ունեցող բետոնե հենապատում, Φ12մմ	հատ	18.00000	0.25340	4.56120
2	E6-86	Φ10A500c ամրանների տեղադրում, L=200մմ	տ	0.03000	262.95640	7.88869
3	շուկա	Շաղափած անցքերի լցափակում պոլիմերցեմենտային լուծույթով	կգ	2.25000	2.93910	6.61298
4	E6-90	Բետոնացում B15 դասի բետոնով /բարձրացում/	մ^3	1.54000	35.03090	53.94759
5	E6-90	Հենապատի անհարթությունների ուղղում B15 դասի բետոնով	մ^3	2.07000	35.03090	72.51396
6	E15-201	Հենապատերի սվաղի իրականացում ցեմենտավազային շաղախով 1:3 հարաբերությամբ	մ^2	38.70000	1.17640	45.52668
7	E15-521 K=2	Հենապատի դիմային հատվածի նկարազարդում	մ^2	38.70000	0.85080	32.92596
		Ցայտաղբյուրի պատրաստման, տեղադրման աշխատանքներ, 2 հատի համար				
1	E6-20	Ցայտաղբյուրի տեղի բետոնացում B15 դասի բետոնով	մ^3	0.06000	33.18680	1.99121
2	E17-91 շուկա	Ցայտաղբյուրի պատրաստում և տեղադրում մշակված գրանիտե քարից	հատ	2.00000	87.06850	174.13700
3	շուկա	Ամրան Φ14A500c	տ	0.02720	251.12390	6.83057
4	շուկա	Պող. թիթեղ 200x200x2մմ	մ^2	0.08000	5.98390	0.47871
5	շուկա	Ցինկապատ թասակ Φ200մմ, h=100մմ	հատ	2.00000	7.17500	14.35000
6	շուկա	Ցայտիչի տեղադրում Φ15մմ	հատ	2.00000	4.93280	9.86560
7	E23-1	Ավազի նախապատրաստական և պաշտպանիչ շերտերի իրականացում	մ^3	17.86000	2.82270	50.41342
8	E22-448	Հավաքովի ե/բ դիտահորի կառուցում	մ^3	0.34000	43.52830	14.79962
9	E11-11	Բետոնե նախապատրաստական շերտ	մ^3	0.24000	25.63670	6.15281
10	E11-5	Թեթև խիճ	մ^3	2.60000	5.82240	15.13824

11	P9-118	Մետաղական դռնակ	տ	0.03000	408.39230	12.25177
12	շուկա	Ռետին	գմ	6.00000	0.35870	2.15220
13	շուկա	Օխնի	հատ	4.00000	0.26910	1.07640
14	շուկա	Փական	հատ	2.00000	1.34530	2.69060
15	շուկա	Ջերմամեկուսիչ սալ (երկտավր 30x3 L=400մմ-2հատ, 30x3 L=590մմ -4 հատ պլաստմաս, 30x 3 L=490մմ 8հատ պլաստմաս, խարիսխ-4հատ, փրփրապլաստ h=100մմ - 1հատ, հեղյուս L=140մմ, Φ 8-6հատ)	կոմպ	2.00000	14.34990	28.69980
16	E22-117	Ջերմամեկուսիչ նյութ	գմ	3.00000	0.29490	0.88470
17	շուկա	Շին. սիլիկոն	հատ	2.00000	0.87890	1.75780
18	E15-613	Մետաղական դռնակի յուղաներկում	$մ^2$	6.00000	0.40410	2.42460
19	E22-117	Պոլիպրոպիլենային լայնուկավոր խողովակների մոնտաժում de63 (կոյուղու)	գմ	52.00000	1.00090	52.04680
20	E22-117	Պոլիպրոպիլենային եռակցվող խողովակների մոնտաժում de15, PN=1.0ՄՊա (խմելու ջրի)	գմ	44.00000	0.35140	15.46160
21	E22-117	Պլաստմասե պատյան խողովակ DN32	գմ	16.00000	0.38490	6.15840
22	E16-134	Մետաղե գնդային փական DN15	հատ	2.00000	2.81040	5.62080
23	E22-312	Պոլիէթիլենե (PE) de15 խողովակների լվացում, ախտահանում	կմ	0.04400	43.10340	1.89655
		<u>Այլ աշխատանքներ</u>				
1	E15-77	Ցայտաղբյուրի հարթակի երեսպատում բազալտե սալերով	$մ^2$	1.70000	11.52340	19.58978
2	Գնահաշվարկ N1	Մետաղական ճաղաշարի իրականացում	գմ	106.20000	7.59060	806.12172
3	Գնահաշվարկ N2	Մետաղական աղբամանների ձեռք բերում /պատրաստում/ և տեղադրում	հատ	7.00000	8.62730	60.39110
4	Գնահաշվարկ N3	Նստարանների ձեռք բերում /պատրաստում/ և տեղադրում	հատ	8.00000	42.57310	340.58480

5	E27-19	Խաղահրապարակներում կապույտ ավազի՝ գլաքարի շերտի իրականացում, 10սմ հաստ.	մ^3	8.65000	2.02180	17.48857
6	Գնահաշվարկ N4	Նոր մանկական խաղասարք «4 տեղանոց պտտվող կարուսել»-ի ձեռք բերում /պատրաստում/ և տեղադրում	հատ	2.00000	178.78000	357.56000
7	Գնահաշվարկ N5	Նոր մանկական խաղասարք «Հորիզոնական ճոճանակ»-ի ձեռք բերում /պատրաստում/ և տեղադրում	հատ	2.00000	42.72320	85.44640
8	Գնահաշվարկ N12	Նոր մանկական խաղասարք «ճոճանակ»-ի ձեռք բերում /պատրաստում/ և տեղադրում	հատ	2.00000	78.58960	157.17920
9	Գնահաշվարկ N11	Նոր մետաղական զրուցարանի ձեռք բերում /պատրաստում/ և տեղադրում 2.5x4մ չափերով, սեղանով, նստարաններով	հատ	1.00000	407.47640	407.47640
10	E27-42 E27-42-1	Խճի նախապատրաստական շերտի իրականացում 5սմ հաստ.	մ^2	111.35000	0.58070	64.66095
11	E-27-171	Մանրահատիկ ասֆալտբետոնե ծածկույթի իրականացում 3սմ հաստ. /300x150մմ չափերով եզրաքարերի երկայնքով՝ 0.5մ լայնությամբ/+70.5քմ /ըստ նախագծի/	մ^2	111.35000	2.25600	251.20560
12	E1-1592	Բուսահողի մշակում էքսկավատորով, ինքնաթափ մեքենաների բարձելով	մ^3	64.50000	0.36250	23.38125
13	C310 տ.մ.կ. 29	Բուսահողի տեղափոխում 50կմ	տ	96.75000	5.12790	496.12433
14	E48-168 E48-169	Բուսահողի փռում ձեռքով կանաչ տարածքներում, 100մմ հաստությամբ	մ^2	645.00000	1.24570	803.47650
15	E48-166	Նախապատրաստում սերմի ցանելու համար	մ^2	645.00000	0.11750	75.78750
16	E48-214	Սերմի ցանում 1մ^2 - 35գր	մ^2	645.00000	0.18860	121.64700
		<u>էլեկտրատեխնիկական մաս</u>				
1	E1-962	Բնահողի մշակում /խրամուղում/, ձեռքով	մ^3	32.16000	2.53370	81.48379
2	8-142-1	Անկողնակի պատրաստում	գմ	94.60000	0.18280	17.29288
3	E23-1	Ավազ /ստորին և վերին պաշտպանիչ շերտ 10սմ հաստ., 2.8+2.8մ^3 /	մ^3	5.60000	2.82270	15.80712
4	8-417-7	Խողովակ վինիպլաստե ∅50մմ	գմ	94.60000	0.40870	38.66302
5	E8-145-1	ՈՊՎՐ 2x4մմ^2 հատվածքով մալուխի անցկացում /ստորգետնյա/	գմ	94.60000	0.33210	31.41666

6	շուկա	Պաշտպանիչ /զգուշացնող/ ժապավենի տեղադրում 300մմ լայնքով	գմ	94.60000	0.19730	18.66458
7	E1-969	Բնահողի ետլիցք ձեռքով, տոփանումով	$մ^3$	24.60000	0.73400	18.05640
8	C310-13տ.մ.կ 29	Ավելորդ բնահողի եւ շին. աղբի բարձում ինքնաթափ մեքենաների վրա եւ տեղափոխում 13կմ	տ	13.61000	2.45340	33.39077
9	Գնահաշվարկ N7	Լուսավորության դեկորատիվ հենասյուների տեղադրում	հատ	5.00000	87.16710	435.83550
10	8-594-1	Բացակայող ապակե պլաֆոնների տեղադրում /NCL-4U-840-E27/ էկոնոմ լամպով 85վտ, կամ համարժեք	հատ	1.00000	10.63320	10.63320
		<u>Ոռոգում</u>				
		<u>Տեխնոլոգիական աշխատանքներ</u>				
1	E22-397	Միացում գործող ջրագծին	տեղ	1.00000	2.14470	2.14470
2	E22-65	Խողովակաշարի անցկացում պողպատե էլեկտրաեռակցվող խողովակներից Φ76x3.5մմ, հիդրավլիկ փորձարկումով	գմ	145.00000	2.60950	378.37750
2	E22-64	Խողովակաշարի անցկացում պողպատե էլեկտրաեռակցվող խողովակներից Φ48x3.0մմ, հիդրավլիկ փորձարկումով	գմ	42.00000	1.46420	61.49640
4	E22-368	Թուջե կցաշուրթավոր սողնակների տեղադրում 30կ 66բ∅50մմ Ру1.0ՄՊա	հատ	3.00000	11.57590	34.72770
5	E22-429	Պողպատե կցաշուրթերի եռակցում ∅50	հատ	6.00000	2.22480	13.34880
6	Գնահաշվարկ N8	Ջրթող հանգույցների մոնտաժում	կ-տ	12.00000	5.47980	65.75760
7	շուկա	Ջրցան ցնցուղ	հատ	12.00000	4.03590	48.43080
8	Գնահաշվարկ N9	Խողովակաշարի դատարկման հանգույցի մոնտաժում	կ-տ	1.00000	4.30020	4.30020
9	E22-362	Պողպատե ձեւավոր մասերի մոնտաժում	տ	0.04000	1742.32950	69.69318

10	շուկա	Հեղուս M16, L=60մմ	կգ	3.52800	0.89690	3.16426
11	շուկա	Պնդօղակ M16	կգ	1.00800	0.94170	0.94923
12	E15-614	Պողպատե խողովակների ներկում 2 շերտ	մ^2	27.80000	0.76450	21.25310
13	E22-145	Պողպատե խողովակաշարի ուժեղացված հակակոռոզիոն մեկուսացում, Φ76	մ^2	13.14000	0.90220	11.85491
14	E22-335	Պողպատե խողովակների լվացում Φ48մմ	գմ	42.00000	0.02160	0.90720
15	E22-336	Պողպատե խողովակների լվացում Φ76մմ	գմ	145.00000	0.02340	3.39300
		<u>Շինարարական աշխատանքներ</u>				
1	E27-33	Ասֆալտբետոնե շերտի քանդում իր նախաշերտով, 96.0քմ	մ^3	5.28000	2.76090	14.57755
2	C310-13 տ.մ.կ 29	Շին. աղբի բարձում ինքնաթափ մեքենաների վրա եւ տեղափոխում մինչև 13կմ	տ	8.98000	2.44030	21.91389
3	E1-1552	IV կարգի գրունտի մշակում էքսկավատորով, կողլիցքով /խրամուղում/	մ^3	30.71000	0.49530	15.21066
4	E1-1593	IV կարգի գրունտի մշակում էքսկավատորով, ինքնաթափ մեքենաների վրա բարձելով /խրամուղում/	մ^3	16.50000	0.46520	7.67580
5	E1-961	III կարգի գրունտի մշակում ձեռքով /խրամուղում/	մ^3	1.74000	1.43653	2.49956
6	E23-1	Ավազ /հիմնատակ և վերին պաշտպանիչ շերտ/	մ^3	16.50000	2.82270	46.57455
7	E1-261	Գրունտի ետլիցք մինչև 96կվտ (130ձ.ու.) հզորությամբ բուլդոզերով	մ^3	32.45000	0.03390	1.10006
8	E1-1184	Գրունտի տոփանում	մ^3	32.45000	0.15590	5.05896
9	E27-43 E27-43-1	Խճի նախապատրաստական շերտ h=12սմ	մ^2	66.00000	0.86370	57.00420
10	E27-251-1	Բիտումի տարածում /1մ^2 - 4.12կգ բիտումի ծախսով/ S=96.0մ^2	տ	0.27200	191.01560	51.95624
11	E27-164-1	Խոշորահատիկ ասֆալտբետոնե ծածկույթի իրականացում 4սմ հաստությամբ	մ^2	66.00000	2.13800	141.10800

12	E27-164-2	Մանրահատիկ ասֆալտբետոնե ծածկույթի իրականացում 4սմ հաստությամբ	$մ^2$	66.00000	2.90570	191.77620
13	C310-13 տ.մ.կ 29	Ավելորդ բնահողի տեղափոխում մինչև 13կմ	տ	29.70000	1.93169	57.37119
		Ընդամենը				11200.00000

Պատվիրատու
Երևանիքաղաքապետարան
ք.Երևան 0015, Արգիշտիիփ. 1
Կենտրոնական գանձապետարան
Հ/Հ900052473429
ՀՎՀՀ 02593108

Է. Կիրակոսյան ----------
(ստորագրություն)
Կ.Տ

Կապալառու
<<Ռադիկի Շին>> ՍՊԸ
ՀՀ ք. Երևան, Հաղթանակ 14, 2 տուն
<<Ակբա Կրեդիտ Ագրիկոլ բանկ>> ՓԲԸ
Հ/Հ 2205133330146000
ՀՎՀՀ 01269471

Ա. Դավթյան ----------
(ստորագրություն)
Կ.Տ

Հավելված թիվ 2
<<10> հունիսի 2019թ.
Կնքված աշխատանքների կատարման
թիվ<<ԵՔ-ԲՄԱՇՁԲ-19/31-3>> գնման պայմանագրի

ՕՐԱՑՈՒՑԱՅԻՆԳՐԱՖԻԿ
Երևան քաղաքի Աջափնյակ վարչական շրջանի Ֆուչիկի 1-ին նրբ. 5 շենքի բակային տարածքի հիմնանորոգման »
ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻԿԱՏԱՐՄԱՆ

N ը/կ	Կապալառուիկողմիցկատարվելիքաշխատանքների առանձինտեսակների անվանումներ	Աշխատանքներիկատարմանժամկետը**	
		Սկիզբը	Ավարտը
1	Երևան քաղաքի Աջափնյակ վարչական շրջանի Ֆուչիկի 1-ին նրբ. 5 շենքի բակային տարածքի հիմնանորոգման աշխատանքներ	Պայմանագիրը ուժի մեջ մտնելու օրվանից	30.09.2019թ
	ԸՆԴԱՄԵՆԸ		

Պատվիրատու
Երևանի քաղաքապետարան
ք.Երևան 0015, Արգիշտիիփ. 1
Կենտրոնական գանձապետարան
Հ/Հ900052473429
ՀՎՀՀ 02593108

Է. Կիրակոսյան ----------
(ստորագրություն)
Կ.Տ

Կապալառու
<<Ռադիկի Շին>> ՍՊԸ
ՀՀ ք. Երևան, Հաղթանակ 14, 2 տուն
<<Ակբա Կրեդիտ Ագրիկոլ բանկ>> ՓԲԸ
Հ/Հ 2205133330146000
ՀՎՀՀ 01269471

Ա. Դավթյան ----------
(ստորագրություն)
Կ.Տ

Հավելված N 3
<<10> հունիսի 2019թ.
Կնքված աշխատանքների կատարման
Թիվ **<<ԵՔ-ԲՄԱՇՁԲ-19/31-3>>** *գնման պայմանագրի*

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*
ՀՀդրամ

Աշխատանքի									
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումներիպլանովնախատեսվածմիջանցիկծածկագիրը՝ ըստԳՄԱդասակարգման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2019թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում**						
	45611300		հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
1		Երևան քաղաքի Աջափնյակ վարչական շրջանի Ֆուչիկի 1-ին նրբ. 5 շենքի բակային տարածքի հիմնանորոգման աշխատանքներ	**11 200 000**	**11 200 000**	**11 200 000**	**11 200 000**	**11 200 000**	**11 200 000**	**11 200 000**	**11 200 000**

** Վճարմանենթակագումարներըներկայացվում են ամբողջականկարգով:*

Պատվիրատու
Երևանիքաղաքապետարան
ք.Երևան 0015, Արգիշտիի փ. 1
Կենտրոնական գանձապետարան
Հ/Հ900052473429
ՀՎՀՀ 02593108

Է. Կիրակոսյան _____
(ստորագրություն)
Կ.Տ

Կապալառու
<<Ռադիկի Շին>> ՍՊԸ
ՀՀ ք. Երևան, Հաղթանակ 14, 2 տուն
<<Ակբա Կրեդիտ Ագրիկոլ բանկ>> ՓԲԸ
Հ/Հ 2205133330146000
ՀՎՀՀ 01269471

Ա. Դավթյան _____
(ստորագրություն)
Կ.Տ

Հավելվածթիվ 4
<<> հունիսի 2019թ.
Կնքված աշխատանքների կատարման
*թիվ<<**ԵՔ-ԲՄԱՇՁԲ-19/31-3**>>գնման պայմանագրի*

Պայմանագրիկողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելուվայրը _____	գտնվելուվայրը _____
հհ _____	հհ_____
հվհհ _____	հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻԿԱՄԴՐԱՄԻՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « »20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝

_____

Պայմանագրիկնքմանամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրիհամարը՝ _____
ՊատվիրատունևՊայմանագրիկողմը՝հիմք ընդունելովպայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
ՊայմանագրիշրջանակներումՊայմանագրի կողմը կատարել է հետևյալ աշխատանքները՝

N	Կատարվածաշխատանքների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Սույն արձանագրություններկկողմհաստատման համար հիմք հանդիսացածհաշիվապրանքագիրընդրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Աշխատանքը հանձնեց	Աշխատանքը ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված 4.1
<<> հունիսի 2019թ.
Կնքված աշխատանքների կատարման
*թիվ<<**ԵՔ-ԲՄԱՇՁԲ-19/31-1**>>գնման պայմանագրի*

ԱԿՏ N

պայմանագրիարդյունքըՊատվիրատուինհանձնելուփաստըֆիքսելուվերաբերյալ

Սույնով արձանագրվումէ, որ_____-ի(այսուհետ՝ Պատվիրատու) և_____-ի
ՊատվիրատուինանունըԿապալառուինանունը
(այսուհետ՝ Կապալառու)միջև20 թ. _____ -ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը
գնման պայմանագրի շրջանակներում Կապալառուն20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված աշխատանքները.

Աշխատանքի		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

ՏՈՒԺԱՆՔԻ ՄԱՍԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ
«ԵՔ-ԲՄԱՇՁԲ-19/31-3»
(պայմանագրի կատարման ապահովում)

ք. Երևան

«10» հունիսի 2019 թ.**

<<Ռադիկ Շին>>, ՍՊԸ-ի դեմս Ընկերության տնօրեն՝ <<Ա. Դավթյանի, ՀՀ անձնագիր AM0444161 տրվ.05.09.2011. 008-ի կողմից >>, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա՝ (այսուհետև՝ Ընկերություն), սույնով միակողմանի սահմանում է հետևյալ տուժանքի վճարման համաձայնությունը.

1. Համաձայնության առարկան

1.1 Ընկերությունը մասնակցում է _____Երևանի քաղաքապետարանի* (այսուհետ՝ Պատվիրատու) կողմից
պատվիրատուի անվանումը

կազմակերպված՝ **"ԵՔ-ԲՄԱՇՁԲ-19/31»*** ծածկագրով գնման ընթացակարգին:
ընթացակարգի ծածկագիրը

1.2 Որպես գնման ընթացակարգի արդյունքում կնքվելիք պայմանագրի կատարման ապահովում, Ընկերությունը Պատվիրատուին է ներկայացնում սույն տուժանքի համաձայնագիրը և կից վճարման պահանջագիրը՝ լրացված և հաստատված Ընկերության կողմից:

1.3 Ընկերությունը սույն տուժանքի համաձայնագրին կից ներկայացվող վճարման պահանջագրի /այսուհետ՝ Պահանջագիր/ ստորագրմամբ անհետկանչելիորեն համաձայնվում է, որ

ա) Պահանջագրի ստորագրմամբ Ընկերությունը տալիս է իր հավաստումը Պահանջագրի «Վճարման պայմանները» դաշտում լրացված «ակցեպտավորված վճարման» համար, որի դեպքում նշված գումարի գանձման հետ կապված Ընկերությանը սպասարկող /վճարող/ Բանկը՝ /այսուհետ՝ Վճարող Բանկ/ ստացված Պահանջագիրը չի ներկայացնում Ընկերությանը լրացուցիչ համաձայնություն ստանալու համար, քանի որ Ընկերության կողմից Պահանջագրի վրա արդեն դրվել է ստորագրությունը՝ ակցեպտավորման նպատակով:

բ) Պահանջագիրը հիմք է հանդիսանում Վճարող Բանկի համար՝ Պահանջագրով նշված ամբողջ գումարը Ընկերության հաշվից գանձելու համար՝ առանց լրացուցիչ ակցեպտավորման:

գ) Ընկերությունը չի կարող գրավոր կամ այլ եղանակով Վճարող Բանկին կարգադրել Պահանջագրի վրա դրված իր ակցեպտը հետ կանչելու մասին:

դ) Ընկերությունը հավաստում է, որ Պահանջագիրը ակցեպտավորել է տուժանքի ամբողջ գումարով:

ե) Ընկերությունը սույնով համաձայնում է, որ Վճարող Բանկը որևէ պատասխանատվություն չի կրում Պատվիրատուի կողմից ներկայացված վճարման պահանջի և Պահանջագրի իրավաչափության, վավերականության, ներկայացման ժամկետների և Պահանջագրի կատարումն ապահովելու համար Վճարող Բանկի կողմից իրականացվող գործողությունների համար:

1.4 Ընկերության կողմից գնման ընթացակարգի արդյունքում կնքված պայմանագիրը չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու դեպքում Պատվիրատուն սույն տուժանքի համաձայնագիրը և կից Պահանջագիրը բնօրինակներով ներկայացնում է Վճարող Բանկին՝ այդ մասին գրավոր տեղեկացնելով Ընկերությանը: Սույն տուժանքի համաձայնագիրը և կից ՊահանջագիրըէլեկտրոնայինթվայինստորագրությամբհաստատվածլինելուդեպքումդրանքՎճարողԲանկինեններկայացվումէլեկտրոնայի նկրիչներով, ինչպեսնաևդրանցիցարտատպվածթղթայինտարբերակներով:

1.5 Պատվիրատուն Վճարող բանկին կարող է ներկայացնել այլ լրացուցիչ փաստաթղթեր:

1.6 Վճարող Բանկի կողմից Պահանջագրում նշված գումարի վճարման հետևանքով Ընկերության առաջացած ռիսկերի (Ընկերության կրած վնասների) և բացասական հետևանքների համար Բանկը որևէ պատասխանատվություն չի կրում:Բանկը պարտավոր չէ ստուգելու Ընկերության կողմից պայմանագրի պայմանները խախտելու փաստերը:

1.7 Այն դեպքում, երբ Ընկերության հաշվի միջոցները չեն բավարարում՝Վճարողբանկըվճարմանպահանջագիրըստանալուցհետո՝ 2 (երկու) աշխատանքայինօրվանընթացքումպետքէտեղեկացնիՊատվիրատուին՝գրավորձևով:

1.8 Սույն համաձայնագիրը և կից Պահանջագիրը Բանկ ներկայացնելուց հետո, Բանկից անկախ պատճառներով, տասն աշխատանքային օրվա ընթացքում Պատվիրատուին գումարը չվճարվելու դեպքում, Պատվիրատուն չվճարման հետ կապված Ընկերության մասին տեղեկությունները փոխանցում է <<ԱԲՌԱ Քրեդիթ Ռեփորթինգ>> ՓԲԸ (Վարկային բյուրո):

2. Այլ պայմաններ

2.1 Սույն համաձայնագիրը և Պահանջագիրը անհետկանչելի են, ուժի մեջ են մտնում Ընկերության կողմից վավերացման պահից և ուժի մեջ են մինչև 15/10/2020 **(Ընկերության կողմից կնքվելիք պայմանագրով ստանձնվող պարտավորությունները ողջ ծավալով կատարելու վերջին օրվան, իսկ պայմանագրով երաշխիքային ժամկետ սահմանված լինելու դեպքում՝ երաշխիքայինժամկետի ավարտին հաջորդող 10-րդ աշխատանքային օրը ներառյալ):

2.2.Սույն համաձայնագիրը և կից Պահանջագիրը Պատվիրատուի կողմից Վճարող Բանկին ներկայացնելով՝

2.2.1. Պատվիրատուի կողմից հավաստվում է, որ Ընկերությունը թույլ է տվել պայմանագրային պարտավորությունների խախտում, իսկ

2.2.2. Ընկերության կողմից հավաստվում է, որ սույն տուժանքի համաձայնագիրը և կից Պահանջագիրը պատշաճ ստորագրված է Ընկերության իրավասու անձի կողմից:

2.3 Սույն Համաձայնագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

3. Ընկերության հասցեն, բանկային վավերապայմանները՝

Կապալառու
<<Ռադիկի Շին>> ՍՊԸ
ՀՀ ք. Երևան, Հաղթանակ 14, 2 տուն
<<Ակբա Կրեդիտ Ագրիկոլ բանկ>> ՓԲԸ
Հ/Հ 2205133330146000
ՀՎՀՀ 01269471

Ա. Դավթյան ----------

«ՌԱԴԻԿ ՇԻՆ»
"РАДИК ШИН"
"RADIK SHIN"
01269471

1.

ՎՃԱՐՄԱՆՊԱՀԱՆՋԱԳԻՐ[1]

2. Թիվ

3. Ներկայացմանամսաթիվը՝ "___" ___ 20___թ.

4. Վճարողի անվանումը, կամ անուն ազգանուն (Ընկերություն ՝ «Ռադիկ Շին» ՍՊԸ

5. Վճարողին սպասարկող Ֆինանսական կազմակերպություն (բանկ)՝ <<Ակբա Կրեդիտ Ագրիկոլ բանկ>> ՓԲԸ

6. Վճարողի հաշվի համարը՝ Հ/Հ 2205133330146000

7. Վճարողի ՀՎՀՀ՝ 01269471

8. Վճարողի ՀԾՀ՝

9. Շահառուի անվանումը, կամ անուն ազգանուն ՝ Երևանի քաղաքապետարան

10. Շահառուի ՀԾՀ (չի լրացվում)

11. Շահառուի ՀՎՀՀ՝02593108

12.Շահառուին սպասարկող Ֆինանսական կազմակերպություն (բանկ)՝ Կենտրոնական գանձապետարան

13.Շահառուի հաշվի համարը (հշ.N)900015211429

14.Գումարը(թվերով և բառերով)՝**1120000**/մեկ միլիոն հարյուր քսան/

15. Ակցեպտավորված գումարը՝ (թվերով և բառերով)(նախատեսված է նշված գումարի մասնակի ակցեպտի համար, որը չի կիրառվում)

16.Արժույթը (բառերով և կոդով)՝ ՀՀ դրամ ADM

17.Գործարքի (վճարման) նպատակը՝*(պայմանագրի կատարման ապահովման համար)*

18. Վճարման կատարման հիմքերը՝ (Փաստաթղթերի անվանումը, այդ թվում՝ տուժանքի մասին համաձայնագիրը, դրանցիամարները,պայմանագրի ծածկագիրը որի հիման վրա կատարվում է գանձումը)՝ **ԵՔ-ԲՄԱՇՁԲ-19/31-3**

19. Վճարման պայմանները՝ <ակցեպտավորված վճարում>

20. Առդիր էջերի քանակը՝ --- էջ

22.ա. Շահառուի ստորագրությունները /_____/ /_____/ 22.բ. Կ.S.	21.ա. Վճարողի ստորագրությունները՝ Ա. Դավթյան /_____/ /_____/ 21.բ. Կ.S.
24.ա. Շահառուին սպասարկող ֆինանսական կազմակերպություն /_____/ /ստորագրություն/ 24.բ. Կ.S. 24.գ "___" ___ 20___ թ.	23.ա. Վճարողին սպասարկող ֆինանսական կազմակերպություն /_____/ /ստորագրություն/ 23.բ. Կ.S. 23.գ.Կատարման ամսաթիվը՝ "___" ___ 20___թ.

[1] *Վճարման պահանջագիրը լրացվում է համաձայն սույն հրավերով սահմանված «Վճարման պահանջագրի պարտադիր վավերապայմանների և լրացման կարգի»:*